

Էղա լաճ միծացաւ, օքէն մէկ մօր էսաց,  
Մարէ՛, ձի խէ՛ շիշէ՛.  
Էսաց, Քիւ խէ՛ իրի աս տե՛, զքի վասար-  
ից, դինաց:

Էսաց, — Անու նշան աս բազպանդնի. ան  
օր ինչ ա՛էթէրը էսաց, «Թա քզի աղջրէ իլաւ,  
աս բազպանդ կը ծախիք, կուտիք մինչիւ մեռնե-  
լիւ ձի խերիք իւ» էսաց, «Թը լաճ ելաւ, կը կա-  
սին վար աջ թիւին, խրիփս գեայ իմ յառէց».

Տղէն էր իլաւ, բազպանդ կապից վար յիւր  
թիւիւ, գինաց էդա ծուփու բիրան, քինաւ, ինչ խէ՛ր  
քինիք իւ: Զիշանք էկին, տըսան: բազպանդ ար-  
ձկիցըն, կապըցըն խալաւքիրու տակի խանցըցն վիւ:

Զիշանք ասոցցն, — Մարդո՞ կայ աս տե՛, զքիւ  
խէ՛ր սպանիք իւ, էրթանք վերէն կուիւ:

Տիւլիւն շախ էսաց,

— Ո՞՛ իմ խէ՛ր սպանիք իւ, իս ա՛էթամ վար  
անու կուիւ, մարդ տը չգէօյ իս մնակ տ'էթամ:  
Առաւուտուն Տիւլիւն շախ գինաց կուիւ:

Անուշ շախն էլ էնա եանից իկաւ կուիւ:

Ան տե՛ Անուշ շախ, Տիւլիւն շախ առըն  
յիրար, Անուշ շախ չկէրցաւ դարպ (հարուած)  
զարկէր.

Տիւլիւն շախ անձախ իլաւ յիւր պառաւան  
(անձնադաշտպանութիւն):

Անուշ շախ չիթուղ իրան դարպ դպնը.

Տիւլիւն շախ անձամի (անփորձ) էր չիր գէրի  
զանի, որ զանէր, մէկ դարպէն կիցգէր, կապանէր:

Զանք յիթկուն կուուան, յիթկուն Տիւլիւն  
շախ դարձաւ, իկաւ Զիշանց մէջ. Անուշ շախն  
էլ դարձաւ, գինաց իրա տեղը, մազտէն էրաւ  
(մոտասանջութեան մէջ ընկաւ, խոժուեցաւ):

Կնքէ էսաց. — Աս օր ինչո՞ւ մադտէն իրիք իւ,

Էսաց, — Ի՞նչիս մադտէն տի չէնիմ, աս օր  
մէկ ջնելիկմ՝ իկեթ իր իմ կուիւ, իս չըմ կրցի անու  
դարպ զարկիք, անձախ իլիր իմ ընձի պառաւան,  
չըմ թուղի ձի դարպ կոլցը, ան ջնելիկն էլ ա-  
նձամի էր, անձամի չէնիք, մէկ դարպէն էնի կապա-  
նէր, իս գըտիմ, առաւուտուն զզի տըսպանի:

Կնքէ էսաց. — Դիւ անու պառկած տեղ  
գտի՞ս. Էսաց. — Գտիմ:

Կնքէ էսաց. — Անիւնք խալար — խազար ին,  
դիւ մնաւուր իս, զիւ ան մէկ գըշիք դինա, զեազտի սպանի:

Անուշ շախ գըշիք գինաց, տըսաւ Տիւլիւն  
շախ վար քեամիկն պառկի, քնիք իւ:

Թուրմ՝ իզար տղի փուրու վերէն.

Թուր կէծակին էր, կոտից, էրաւ, էրկու  
կոտուր:

Տղէն աչքիք իրաց.

— Աղէկ, զիւ ըզի սպանիցը, դիւ իմ խօր  
մեռնէն զիւր տ'ազպառուը:

Էսաց. — Քիւ խօր անուն ի՞նչ ի.

Էսաց. — Իմ խօր անուն Անուշ շախ ի.

Անուշ շախ էլաց, իտու վար յիւր գլխուն,  
— Իմ աչքիք կաւըցուցը, իմ տղէն սպանիցը, իո  
քիւ խէրն իմ:

Անուշ շախ տղի կառւըքիք կրգից, առըց  
տարաւ աղջկաց մօտ.

— Աղէկ չէրաթ էրը վար ձի, իմ աչքիք կուր-  
ցըցը, իմ տղէն սպանիցը:

Աղջկէկ էսաց. — Խուզը կայ ինի.

Էսաց. — Խուզը կայ ինի, յըմա ինչ ա՛էնիմ  
արմեռնը:

Էսաց. — Բի՞ մա ձի, մա ձի գեղ շատ կայ:

Անուշ շախ էսաց. — Դիւ Զիշանց թագեա-  
ւուրի տղէն կասըս՝ ան քեամքեամուկ չեղնէր,  
ան չըր սաղանայ:

Աղջկէկն իրի, լուաց, գեղմ՝ ցանըց վերէն,  
կառւընիք բիրաւ յերար, պարկացուց վար թոր-  
վան. էխան գեղմ՝ էլ իթալ վերէն, յառաջէն  
գահա աղիկ իլաւ:

Խէր, տղէն իլան, գեացըն Զիշանց վերէն  
կուիւ, Զիշանք կուտուրիցըն, դարձան էկին:

Սըւտակ գիլ, Անուշ շախ, Տիւլիւն շախ  
ըզազըք առըն, էկըն Վառըկ Վարդանի կնկեայ  
մօտ: Վառըկ Վարդանի կնըկն էլ առըն, էկըն  
Բարակ շախի մօտ:

Անուշ շախ իզար, սիւ զիլ սպանից:

Բարակ շախ, Անուշ շախ, Տիւլիւն շախ,  
Սըւտակ գիլ, Վառըկ Վարդանի կնկե, առըն  
զազէկի, գինացըն Բարակ շախի խօր մօտ:

Անօթ փառօք զաղջիկ պատկին Անուշ շախի  
վերէն:

Ան տեղ եօթ օր, եօթ գըշիք խարմնիս  
գրին, կերան խման:

Անիւնք խասան ուրինց մրագ, դիւքն էլ առ  
տե խասնիք ձի մըրագ:

Ս. Հայկունի



## ԵՐԿՐԱԳՈՒԾԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՑ

### ԳԻՏԵԼԻՒՄՆԵՐ

(Եարունակուրիւն և վերի) \*

ԹԵՂԻ ՔԱՄՄԵԼԻ ԵՒ ԸՆՏԻՒՐ ՍԵՐՄՈՅՑՈՒՒԻ

ՀԱՄԱԲ ՀԱՏԻԿԻՆԵՐ ԶԱՏԵԼԻՐ.

Թեղի կոչւումէ կալսած, բայց գեռ չերնած,  
քամմած ցորենը, դարին և այլն, երբ գեռ դար-

\* Տիւլիւն Ար. Ար. Ամ. Ե. և Զ.

մանը ցորենից գարու հետ խառն է, թեղել թեղը քամել, էրան անել նշանակում է, զատել բաժանել գարմանը, չփշրած համերը հողը և այլ աւելորդ նիւթերը, ցորենից գարուց և այլն:

Հացարոյսերը կալսելուց յետոյ ստացուած թեղի մէջ զանուում են հատիկ, զանազան վասակար բոյսերի սերմեր, գարման, թեփ, ամրող համեր, որոնց մէջ զեռ կան հատիկներ, աւազ, հողային մասեր և այլն: Անհրաժեշտ է այդ խառնուրդից ջոկի համերը, մաքրել այն: Այդ նպաստակի համար թէ սուածին ժամանակներում և թէ ներկայում մեզանում շատ և շատ աեզերում զեռ գործադրում են մի շատ անյարմար և վասակար եղանակ, էրնում, քամում են թեղը հորսելիներով: Թեղից մի որոշ չափով հորսելիներով վեր են զցում յարմարաւոր քամու ժամանակ որպէս զի վայր թափուելիս քամին նրա թեթև մասերը քշէ սանի մի կողմէ աւելի հեռու, իսկ ծանր մասերը ուրին և համելիները, աւազը, լիք համերը վայր թափուեն ուղղահայեաց: Նատքական է, որ այդ ժամանակ ծանր համելիները աւելի ուղղահայեաց ուղղութեամբ վայր կթափուեն, աւելի թեթև, մանր աեսակները նրանցից աւելի հեռու կընինեն, քամին քշում տանում է շատ և շատ հեռու թեփը շատ մանրացած զարմանը: Թեղից ցորեն ստանալու այս նախնական եղանակը շատ և շատ անյարմարութիւններ ունի. նախ՝ որ խեղճ դիւզացին ստիպուած է, այնքան սպասելի մինչև որ մի լու եղանակ լինի. երկրորդ՝ որ որոշ ուղղութեամբ և յարմարաւոր ստակութեամբ փող քամիներ աեղի ունենան, երրորդ՝ որ շատ անգամ կամ անզգուշութեան և կամ թեղ քամողի կամ մաղողի խառնութեան պատճառով շատ և շատ հատիկներ խառնուում են դարմանի հետ և այնպէս զնում, կորցում են. ջրլորդ՝ որ յարդի մէջ մասը ուժեղ քամին քշում, տանում է և զրկում անտառուներին շատ սեղերի համար միակ ձմբան կերակրից: Բացի այդ ոչ հորսելիով և ոչ մաղով կարելի է մաքրել համելիները վասակար և անպէտք սերմերից, մասեր աւազից, հողից:

մարաւոր մէքենաներ թեղը քամելու (Ենյակ), համելիներ մաքրելու համար (հոսիչ մէքենաներ), որոնց մէջ արհեստական կերպով յառաջացրած քամիով ջոկում են ցորենը գարմանից: Կալսելուց յետոյ հարկաւոր է մաքրել հատիկները. այս գործողութիւնը, ինչպէս վերև ասացինք, կասարւում է թեղը քամելու հոսիչ մէքենայով: Կալսածը լցնում են բանի մէջ, որտեղից անցնում և թափուում է մաղի վրայ. այս տեղ քամի առաջ կրայ որով համելիները բոլորովին մաքրուած մաղի ծակերից վայր կթափուեն, իսկ քարերը, հողի կտորտանկը մէքենայի միւս կողմից դուրս կրայ:

Թեղ քամելու մէքենան շատ պարզ է, և հասարակ: Աւելորդ եմ համարում այստեղ առաջ բերել այդ մէքենայի նկարագրութիւնը, որովհետեւ սա մեր մէջ երկրագործական միքենաների համարեա ամենից աւելի տարածուածն է:

Քամելու մէքենաները զանազան տեսակ են լինում, և որովհետեւ ամէն արտի թեղ միաստեսակ չի լինում, այլ պարունակում է իւր մէջ զանազան տոկոսի համեր, ուստի հարկաւոր է առանձին ուշաղը թիւն դարձնել քամելու մէքենաների վրայ՝ նրանց մաղերի ընտրութեան և դասաւորութեան վրայ, բացի յրանից պէտք է նայել քամու կանոնաւորման, մաղերի թեքութեան, հաւասարապէս քամահարելու և այլ բաների վրայ: Մեքենաներից խրաքանչիւր տեսակը յատկացրած է կամ շատ խոշոր, կամ շատ և կամ քիչ դարմանու թեղերը քամելու համար: Ընդհանրապէս բոլոր թեղը քամնզ կամ հոսիչ մէքենաները երկու կարգի են բաժանուում\*). մի աեսակը աւելի արդիւնաբեր է, քան միւսը, թէ պէտք վերջին տեսակը միանգամց մաքրութեականին լու համերի է տալիս:

Երբ հարկաւոր է քամել մեր կամերի տոկոսից մեր սովորական եղանակավ ստացած թեղը, որ սովորացրած աւելի զարմանուու է լինում մործագրում են երկար և յետ ու առաջ շարժուող մաղերով քամելու մէքենայ: Դրա վերը մաղը պէտք է շինած լինի թիւթեղից և ոչ

\* Ծանօթ. Съ продольнымъ «колонитскимъ» вѣялкамъ и поперечнымъ качающимъ рѣшотъ.

երկաթէ լարից—մազթուլից, որովհետեւ մեր թեղերը իրենց մէջ ունենում են շատ քողաք (յաւ չծեծուած հասկ կամ՝ ցօղուն), որոնք շուտով փակում են երկաթէ լարից պատրաստած մաղի ծակերը և արգելը են դասնում թեղի կանոնաւոր քամելուն:

Աւելի լաւ մաքրելու համար՝ էրնածն թեղած հատիկները քամում են երկու կամ երեք անգամ. ամէն անգամ քամելիս մաղերը փոխում են և յարմարեցնում են խառնուրդի ծանրութեանը: Երբ թեղը քիչ դարձան, և պարունակում, մաքրելու համար զործ են դը. նում գիլսաւորապէս այն տեսակ քամելու մեքենաներ, որոնց մաղերը աջ ու ձափ են շարժուած: Նրանք ևս զանազան տեսակ են լինում, մօտաւորապէս 6/2—10 փութ և զինը 45—100 ռ.։ Դարձանաւ թեղը, ինչպէս վերեն յիշեցինք, լաւ մաքրուած է այն տեսակ քամելու մեքենաներով, որոնց մաղերը յիտ ու առաջ են շարժուած: Այս աեսամփերը կոչուած են «կօլօնիտսկի»:

Որպէս զի թեղը քամող մեքենան լաւ և յաջող բանի պէտք է թեղից ջոկել երկար ծղնոսները, կալսածը, մանրածը լցնել մեքենայի մէջ որոշ քանակութիւնից ոչ առել, քիչ-քիչ բաց թողնել մաղերի վրայ և մեքենան միապէս շարժել, պատել՝ մէկ բոպեւած 4—50 անգամ: Անհրաժեշտ պահանջ է նաև որոշեալ ժամանակին ինչպէս այս, նոյնպէս և միւս բոլոր մեքենաները խղել, մաքրու պահել անձրեի տակ շթողնել, և եթէ մի որ և է մասը վնասուած է, պէտք է խսկոյն նորոգել, որպէսպի ոչ մի պակասութիւն չունենալով՝ կարողանաց յաջող զործել:

Հատ անգամ կարեոր է միենոյն արտից, միենոյն թեղից միասնասակ ծանրութիւն և միատեսակ մեծութիւն ունեցող սերմերը ջոկելի կամ թել չէ հարկաւոր է փշրուածները, ուրիշ բյասերի սերմերը, որոնք ձեռով և ծանրութեամբ տարբեր են, ջոկելի սերմացուի համար ընտիր սերմեր պատրաստել, այս նպատակին կարելի է հանելու հարաբիներով էրնելով, ոչ մաղերով մաղերով և ոչ էլ հասարակ թեղելու մեքենայով քամերի այլ յասկապէս այդ նպատակով պատրաստած առանձին մեքենանե-

րով, որ կոչուում է հատվածով կամ զատիչ մեքենայ (օրոտրօվկա):

Այսպիսով ուրեմն հատընակը կամ զատիչ մեքենայի պաշտօնն է հայահատիկների տևակի ները իրարից որոշել և բոլորվին մաքրել նրանց ոչ թե միայն դատ և վաստակար սերմերից, այլ և սերմի խոշոր, մեքը, լաւադայն և առողջ հատիկները նիշար, ջարդուած և վատ հատիկ ներից: Խնչպէս առաջներում յիշել ենք կը նոյնը, որ երկրադոքը որքան լաւ, ընտիր, մաքրու սերմ հային յանձնէ, այնքան աւելի կարող է յուսալ որ մի քանի տարաւց յիտոյ հարաւորութիւն կունենայ իր արտի միջից վերջացնել բոլոր միւս վնասակար բոյսերի սերմերը, որով և կրածրանայ բերը: Այս մեքենան ևս զանազան տեսակ է լինուած: այսպէս օրինակ մի տեսակը որի ծանրութիւնն է 7—10 փութ, զինը 10.0—22.5 ռ. է: Այդ մեքենայի վերեւում զանեւում է բուլը ուր լցնուած են ցարենը օրից յիտոյ մազեսի ոգնութեամբ շարժուած են մեքենան, ցորենը գնուած է մեծ զլանի մէջ, որ չորս մասերի է բաժանուած, որոնցից իւրաքանչիւրը ծակուած է և իւրաքանչիւր ծակի մեծութիւնը և ձեւը առըբեր է: Մեքենան շրջելիս հատիկները մի առանձին տափակ մաղի վրայ թափւելով մաքրուած են իրենց մէջ մնացած փոշուց թեղից, դարմանից և այլն, խոշոր ազբն էլ անցնուած է մաղի վրայից և առանձին է թափւուած: Ապա հատիկները ընկնուած են գրանի մէջ ու այնաւել մաքրուած զանազան ուրիշ անպէտք և օտար հացարցուերի սերմերից: Այս տեսակ գլանաւել հատիկները մեքենաները ջոկեւած են նաև երկար հատիկները կարձերից, ցորենը համարից և այլն: Այս գործիքի միջակ անցնելուց յիտոյ հայահատիկները կարիքի է լցնել շամեաբանները և զործածել, եթէ չորսացնելու կարիք չկայ:

Քիչ ցանք ունեցողների համար խորհուրդ ենք տալիս ունենալ պ. Ֆրեյմանի հապած հատվածութէ կամ վատիչ մեքենան (Ստ. Բախմաչ Կիևո—Յօր. յօլ. դօր.), որ կոչուած է «Ճրխմէծ» և որը ըստ իր նշանակութիւնն պատրաստած է երկու ձեւ պիտօնութիւններով: զոյս մի տեսակը տեղի է ձեւնատու է, և նպատակայ յարմար: Նրա պաշտօնն է մաքրել հայա-

հասակիները, ջոկելով նրանց միջից որուն ները կոտրածած հասակիները տռուցար, կածղեղաւոր սունկերը և այլն: Բառ վրայութեան պ. Ֆրէյմանի՝ նրա մեքենայով միկոյն ցորսից կարելի է երեք տեսակ հացահատիկ ստանալ և, կրիսակի անցկացնելով իր զատիչ մեքենայի միջով հասակիները բոլորովին կաղատուեն որոմից և կուրտուծ հասակիներից: Յթական մաքրում է մինչև 150 գումար հացահատիկ—արժէ 25ռ: Այս զատիչ մեքենան աւելի յարմար է այն պատճառով, որ մեկ քառա արշին տարածութիւնից աւելի չի բռնում:

ՀԱՅՈՉԱՑԵԿՆԵՐ ՉՈՐԱՑՆԵԼՈՒ ԵՊԱՆԱԿԻ.

Յայտնի է, թէ որքան մեծ նշանակութիւն ունի գիւղատնտեսութեան մ.ջ հացահատիկների կանոնաւոր և անվնաս պաշտպանութիւն: Մեծ քանակութեամբ հացահատիկներ յաջող պահպանելու աւածին պայմանն այն է, որ շատ մարդում ժողոված հացահատիկը պետք է հնար եղածին չափ չոր լինի: Անմիջ լաւ և ապահով մնում է, այն հացահատիկը որ կալած է չոր եղանակին և ապա չորացրած է, նաև արելի տակ: Կամ երկրներ, ուր հնձի կամ կալի ժամանակ անընդհատ անձրեւեր են գալիս, այսպիսի հանգամանքներում այլևս ոգի մէջ, արելի տակ չորացնելու յոյս չափետք է ունենալ, այլ պէտք է արհեստական կերպով, այն է առանձնապէս այդ նպասակով կառուցուած տեղերում հացահատիկները չորացնել:

Որպէսզի հացահատիկները երկար և ամպնաս զիմանան, անհրաժեշտ է աղատել նրանց աւելորդ խոնաւութիւնից: Փորձը ցոյց է տուել, որ՝ ա) չոր հացահատիկը երկար ժամանակ անվնաս կմնայ, իսկ խռնաւացածը մըլում, փառում և բորբոսում է և կարող է մինչև անգամ լըքել, բ) անբարար չորացրած հացահատիկը գժուալութեամբ է աղցոււում և աւելի սակաւ այլուր է տալլիս, քան չորացրածը, գ) առհասարակ չորացրած հատիկներից աւելի քառ ալիւր է սացւում քան չորացրածից, աւելի զժուաւարութեամբ կարելի է անվնաս պահել այն, քան չորացրածը, հաց թիւելիս նրանից տա-

կաւ աճող խմոր կստացուի և ալիւրի ու նրանից թիւուած հացի ծանրութեան մ.ջ տարրերութիւնը խիստ անհշան է, նրանից ողի քաշելիս քիչ սպիրտ կստացուի. և վերջագետ գ) խոնաւ հացահատիկը և ալիւրը փախաղը բռու համար աւելի ոյժ է պահանջուած ու որով և աւելանում է, նրա գինը ու այդպիսով ոչ արդիւնաբերողին և ոչ պահանջ ունեցողին օգուտ է բերում: Այս բոլոր ասածներից պարզ երևում է, որ անհրաժեշտ է կանոնաւոր կերպով չորացնել հացահատիկները: Եղանակը հացահատիկներում հացահատիկը ոչ միայն հասաւնանում է, այլ և գաշտում արեգակի ճառագոյնութիւնը և տաք, չոր քամու ազդեցութեան տակ չորանում է, բայց արելի տարացրած ոյջը այնքան չոր չի լինի, որքան արհեստական կերպով տաքացրածը, ուստի և նրանով այնքան լաւ չի կարելի չորացնել, որքան վերջին եղանակով: Ահա այս պատճառով էլ դեռ անցեալ դարուց մարդիկ զդացին հացահատիկները արհեստական կերպով չորացնելու անհրաժեշտութիւնը, մինչև անգամ այնպիսի տոք երկրներում, ինչպիսիներ են՝ Խտաբիան և Թրանսֆրան, և հենց այդ երկրներում զեռ ԽVIII դարու կիսից սկսեցին հիմնել հատիկներ չորացնելու համար առանձին յարմարաւոր տեղեր, վառարաններով հանդերձ, որոնց նկարազրութիւնը այսպես աւելորդ եմ համարում առաջ բերել: Դատ տեղերի համար ինչպէս օրինակ՝ Եփեղ—Նորվեգիայի, հիւսիսային և միջին Առևուստանի և այլ տեղերի համար հացահատիկները արհեստական կերպով չորացնելը խիստ անհրաժեշտ պահանջ է, որովհետեւ կիման խոնաւ է, և հացահատիկները հաւաքած ժամանակ համարեա ամեն անգամ եղանակը անհրեային է լինուած: Արովհետեւ վերջին ժամանակներս խիստ տարածուած է մեքենաներով հացահատիկներ կալայլը ուստի և արհեստական կերպով հատիկներ չորացնելը աւելի ընդարձակ ծաւալ է սատնուած: Հացահատիկները կարելի է չորացնել կամ դեռ չկաստած և կամ երնելուց քամելուց յետոյ, երբ մաքուր հացահատիկ է սատնուած: Առաջին տեսակը, այսինքն չկալածը չորացնուած են (ոչ մեր երկրում, Կով-

կառում) առանձին մարագներում (օվոս), կալերում (բուր) պատրաստած տեղերում, իսկ երկրորդ տեսակը, այսինքն մաքուր հացահատիկները՝ առանձնապէս այդ նպատակով շնորած բորբիկ սենեակներում:

Սովորաբար զանազան հացաբոյսերից ստացուած հացահատիկները մօտաւորապէս երկու անգամ թեթև են լինուած յարդից, այս պատճառով էլ հացահատիկները յարդի հետ եղած դեպքում չորացնելու համար երեք, գուցէ և չինդ անգամ աւելի վառելիք կդնայ, քան եթէ միմիայն մաքուր հացահատիկներ չորացնեն: Մարդում, առանձնապէս պատրաստած տեղերում, հատիկներ չորացնելը ունի ուրիշ շատ անյարմարութիւններ. այնտեղ հացահատիկները, հետեւապէս և այն հացահատիկներից ստացուած ալիքը մի տեսակ անախորժ համ են ստանուած, որ խսկոյն զգալի կլինի անսովոր մարդկանց համար: Ծուխը մէջը մոտած յարդը նոյնպէս վառ կերակուր է ընտանի անասունների համար, նա աւելի պակաս աննդարաբ է, քան քամիով և արեւով չորացրածները: Այդ տեսակ յարդը անսովոր անսունը միայն այն ժամանակ կարող է ուտելի երր քաղցած է, երր ուտելու ոչինչ չունի. իսկ եթէ կմուռող կովերին կերակրեն նոյն յարդից՝ նրանց կաթը, սերը և խողը անհամ կլինին: Ահա սյս պատճառով ներկայ դարուս առաջին քառորդից արդէն սկսում են երևան գալ հատիկներ չորացնելու օգտաւէտ և նպատակայարմար շնորութիւններ, թէպէտ նրանցից և ոչ մէկը սովորաբար իր նպատակն չի ծառայում: Խոնաւ հատիկի մէջ պարունակուած ջրի մի որոշ մասը այնպէս սերտ միաւորուած է հատիկի միւս բաղադրիչ մասերի հետ, որ եթէ նրան միջից դուրս բերենք, հատիկը կկորցնէ իր կեանքը, աճելու ընդունակութիւնը. Ջրի միւս մասը միացած է նրա հետ մերենայօթէնց այսինքն այնպէս, որ առանց մի որ և է դժուարութեան կարելի է դուրս բերել: Չորացնելով կարելի է ջրի այդ մասը դուրս հանելի որ քանակութեամբ տարբեր է լինուած և կախումն ունի բուսած տեղի կլիմայից, աճման և մանաւանդ հացահատիկները հաւաքելու ժամանակ տեղի ուշնեցող եղանակների դրութիւնից են:

Հացահատիկները բաղկացած են լինուած զինաւորապէս օսլայից (նիշասայ) և սպիտակուցային նիւթերից: Անհրաժեշտ է չորացնել այնպէտ, որ ինչպէս զինաւոր այնպէտ և միւս մնացած բաղադրիչ մասերը փոփախութեանց չենթարկուեն: Զամից դուրս մանաւանդ անհմուտ կերպով տաքացնելը կարող է այնպէս փոփախել հատիկի բաղադրիչ մասերը, որ նա ոչ միայն կկորցնէ աճելու ընդունակութիւնը, այլ մինչեւ իսկ կանոնաւորապէս բաւականութիւն չի տայ մարդու քաղցին: Հատիկը արագ և սաստիկ տաքացնելիս օսլան փոխուած է, բայց սաստիկ զիմացկուն է, երբ տաքութիւնը ասսիճանարար է բարձրանուած: Չորացնելիս պէտք է հեռացների հատիկների մէջ Ծից դրսից ծծուած ջուրը, առանց փոփոխութուն նրանց բաղադրիչ մասերը, և ինչ ասսիճանաւորութեամբ որ գոլորշիանուած է հատիկի մէջ եղած խոնաւութիւնը նոյն ասսիճանաւորութեամբ էլ պէտք է բարձրանայ և տաքութեամն ասսիճանը, որովհետեւ փորձը ցոյց է տուել, որ հատիկի մէջ քանի սակաւ լինի դրսից ծծուած խոնաւութիւնը, այնքան բարձրը պէտք է լինի տաքութեամն ասսիճանը որպէս դի հնար լինի նրա միջից դուրս բերել մնացած խոնաւութիւնը, միւս կողմից մեղ յատնի է, որ որքան պակաս լինի դրսից մնած խոնաւութիւնը, այնքան նա աւելի յաւ և երկար կտահուի: Այս վերջին նորագոյն եղանակով հացահատիկ չորացնելիս իբրև հիմք պէտք է ծառայեն հետեւեալ փորձերը: Առհասարակ 75<sup>0</sup> Պ տաքութեամն մէջ չորացրած հացահատիկները չեն կորցնուած աճելու ընդունակութիւնը, բայց որքան բարձր լինի դրանց տաքութեամն ասսիճանը, այնքան հատիկները աւելի կկորցնեն այդ ընդունակութիւնը և բացի դրանից երկարանուած է նաև այն ժամանակամիջոցը, որ ակուած և սերմը ցանելուց սկսած մինչեւ բռնունելը: Չորացնելիս որքան հատիկների շրջապատը չոր լինի այնքան աւելի նրանք կիմանան տաքութեամն բարձր ասսիճանին, առանց կորցնելու աճեցողական ընդունակութիւնը. բ) Հացարց սերի մէջ եղած մակարոյծ (պարագիտ) կնոջանիները՝ ցիցը, բորբռուը և լուրովովին կոշնչանան, երբ 60<sup>0</sup> Պ (48<sup>0</sup> R) տաքութիւն ու-

Նեցող օդով չորացնենք: Կնճ'ստիկերպնիը (Ճօմ-  
գոնօսւիկ) նոյնպէս կոչնչանան: Խոկ ՚նրանց  
ձռաները կողնդանան կոչնչանան 69—75° Ռ  
(55—60° R) ջերմութեան մէջ: Թէ ինչ առ-  
արձան ջերմութեան մէջ հացահատիկները  
կորցնում են իրենց արժեքը, երբ ծառայում  
են իրեւ ՚նիւթ հաց թխելու, օդի քաշելու,  
այս մասին գեւ բաւարար փորձեր չեն կա-  
տարուած: այսքանը միայն կարելի է տաել,  
որ 75° Ռ ջերմութիւնը տաելի վաս է, աղ-  
ջում ՚նրանց բաղադրիչ մասների վերայ:

Այս բոլորից կարելի է եղբակացնել որ  
հատիկներ չորացնելու համար կառուցուած  
յինութիւնը պէտք է բաւարարութիւն տայ  
չետեալ պահանջներին: ա) պէտք է այն-  
տեղ չորացրած հատիկը չխաչուի և շտապտ-  
կուի: բ) պէտք է հատիկները չորանան միա-  
կերպ և կատարելապէս, որովհետեւ առանց  
զրան հատիկը երբէք չի կարող առկահով և  
երկարատեւ կեանք ուննալ: գ) պէտք է հա-  
տիկները չորանալուց յետոյ չկորցնեն իրենց  
վիճակութիւնը, աճելու ընդունակու-  
թիւնը որ պէտքական լինին ցանքի հա-  
մար: դ) պէտք է չորացնելիս վասելիքի և  
աշխատաւոր ձնոքի քիչ պահանջ լինի: ե)՝  
այդպիսի մի շինութիւն հիմնելիս պէտք է  
աշքի առաջ ունենալ, որ հրդեհից արատ  
պայմանների մէջ լինի: դ) պէտք է աշխատել,  
որ լաւ չորացնելը քիչ կախումն ունենայ մշակ-  
ների կամքից: է) օդը, որի մէջ մանում է  
չորացող հատիկներից զուրս եկած գոլորշին,  
որոշ ժամանակ անցնելուց յետոյ յագենում  
է գոլորշիով, որից յետոյ հարկաւոր է այն  
հետացնել որովհետեւ այլեւս այդ տեսակ օդի  
մէջ անհնարին է հատիկներ չորացնելը: բայց  
դրանից խոնաւ օդի մէջ հատիկները առելի  
հեշտութեամբ են կորցնում իրենց աճելու  
ընդունակութիւնները և կարող են մի տեսակ  
անհամ քաղցրութիւն ստանալ: կարող է մին-  
չև անդամ պատահել որ տաքութիւնից վը-  
տեն բոլորովին փշանան:

Հատիկները կարելի է չորացնել երկու  
կերպ՝ փսեւով առաքացրած մակերեւոյթի վերայ  
և կամ փսուած հատիկների մակերեւոյթի վե-  
րայ օդ բաց թողնելով: Որպէս զի հացահա-  
տիկները կանոնաւոր կերպով չորանան, ան-

հրաժեշտ է աստիճանաբար և բաւականաչափ  
բարձրացնել հացահատիկների տաքութեան  
աստիճանը: Եթէ խոնաւ հատիկը միանգամբց  
ենթարկենք խիստ զօրեղ ջերմութեան ազդե-  
ցութեան, այն ժամանակ նրա մէջ եղած ջու-  
րը արագութեամբ կդորոշիանայ, և կարող է  
պատառել բուսական խորշիկները, վանդակ-  
ները որի պատճառով և հատիկը այլեւս ան-  
կարող է աճել: Նատ բարձր տաքութիւն ու-  
նեցող չոր օդը սկսելով իր ազդեցութիւնը  
հատիկի վերին շերտի վերայ, կարող է մի ան-  
գամբց չորացնել և կազմել մի պինդ կեղեւ,  
որ արցելք կլատնայ նրա աւելի ներքին մա-  
սերի չորանալուն բայց եթէ, հատիկը չորա-  
ցութիւն մէջ աաքութեան մէջ և գոլոր-  
շիներով յագեցած շրջապատող օդը չփո-  
խուի կարող է պատճել, որ գոլորշինե-  
րը նատելով հատիկների վերայ խաշեն և  
նրանք կարող են ստանալ անհամ քաղցրու-  
թիւն: Սաստիկ տաքացնելն ես ունի իր ան-  
յարմարութիւնները, որովհետեւ հատիկների  
տակի մասերը կարող են այլուել խանձուել,  
որով և հատիկները զան խանձուածի հոտ  
կատանան: Այս բոլոր ասածներից յետոյ ար-  
դէն հեշտ է իմանալ, թէ ինչ կերպ պէտք է  
հիմնել հատիկները չորացնելու տեղերը, որ ե-  
զանակով չորացնելուն պէտք է առաւելու-  
թիւն սալ: Իր պարզութեամբ և էժանու-  
թեամբ աշքի է ընկնում այն եղանակը, երբ  
տաքացրած մակերեւոյթի վերայ փսեւով են  
չորացնում հացահատիկները: Այն մակերեւոյ-  
թը, որի վերայ սովորաբար փուում են հա-  
տիկը, շինուում է կամ աղիւսից և կամ  
երկախթից: Տաքացնում են տակից, որի համար  
թէ առաջին և թէ երկրորդ տեսակի մակերե-  
ւոյթների տակ շինուում են աղիւսեայ ծխնելոյզ-  
ներ (ՃՅՈՎՈԼՈԿԻ) կամ երկաթեայ խողովակներ:  
Այդ խողովակների միջով է անցնում տաքու-  
թիւնը, և հաղորդուում աղիւսաշէն յատա-  
կին կամ նրանց վերայ փուած երկաթեայ  
թերթերին, որով և չորանում են հացահա-  
տիկները: Պարզ է որ, թէ աղիւսաշէն և թէ  
երկախթէն մակերեւոյթների վերայ հատիկնե-  
րը հաւասարապէս կարող են չորանալ միայն  
այն ժամանակ, երբ փուուած շերտը բարակ  
է, թէպէտ այսպիսի դէղքում քիչ հատիկը

ներ կը ործը գանդաղ տռաջ կը ընալ Գործին աւելի աշադ ընթացք տալու համար, կարելի է փոխ հատիկի հաստ շերտեր, միայն չորացնելու ժամանակ անհրաժեշտ է անդադար խռանել եթե, ոչ կարող են հեշտութեամբ խռանել կամ խորովուել Հատիկները խռանելու համար աշխատաւոր սպիտաւած է մնալ և աշխատել մի այնպիսի անդամն ուր բաւականաշափ տաք և խեզդող է օդը այսպիսով առաջ է գալիս մի խիստ կոր անցարմարութիւն: Այս եղանակով հատիկները չորացնելը ամբողջապես կախումն ունի աշխատաւոր մարդու եռանդից և ճշտապահութիւնից: Պեսք է ուշք դարձնել որպես զի հատիկները չորացնելը քիչ կախումն ունենայ հեկու աշխատաւորի ուշադրութիւնից և կամքից: Այս պատճառ ով միշտ առաւելութիւն պէտք է տալ երկրորդ տեսակին, որի մէջ օդը գործում է բալորովին անկախութագիս, միանդամ որոշուած հաւասարաշափ ընթացք տալուց յետոյ և կամ մեքնայական օգանցքով (ՎԵՆԴԱԼԱՅԱ): Տաքանարով, օդը համեմատաբար աւելի է չորանում և ընդունակ է դասնում կանել ջրի մի նոր քանակութիւն: առանձին օգանցքի միջով տաքացած օդը անց է կենում հացահատիկների միջով և կամ զարս է քաշում այնաեզրից չորացած հատիկների միջից զուրս եկած ջրի գոլործներով յագեցած օդ: Առաջին տեսակին է պատկանում էսմարիսի: Հատիկները չորացնելու համար կարմած շինութիւնը, երկրորդն՝ «Աիւերամնը»: Էսմարիսի այդ հիմնարկութեամբ մէջ ներս են վանում օդը բաւական ոյժեղ հողմամշխով (ՅԵՏՐՈԳՈՒ), որ անց է կենում վաւարանում գարսուած երկաթեայ կամ չուգունեաց խողովակների արանքով: Սաստիկ տաքացած օդը առաջ է դնում չորանուու համար վուուած հատիկի բարակ շերտերի միջով սրոնը թերթաւոր պղնձից շինուած մաղերի մէջ ուղղաձիգ զիբը ունին: Տաքացած օդը մանում է վերոյիշեալ շերտերի միջնավայրով և այնաեզրից զուրս է գոյիս միայն այն ժամանակ, երբ մեջնայի առանձին շարժողութեամբ վայր են թափւում չորացած հատիկները և նրանց տեղը բնուում են նոր՝ զեռ չորացած հատիկներ:

Աիսերսի սիստեմով կազմած հատիկները չորացնելու այդ շինութիւնն մէջ այլութեաց յառաջացած նիւթերը անց են կենում այինպիսի պատրաստած ծիտամուարի (ԴՅՈՎՈՅՈՒ): ապա երկաթէ խողովակի միջով, որ տանում է ծուխը գէպի երկութէ ծինելոյզը շրջապատառ աղիւսեայ խողովակը: Այսպէս կառուցուած մատարանը տեղաւորուած է ուրիմի աղիւսայ սրամերի մէջ, այդ պատերի վրա հատիկները չորացնելու համար պատրաստի զցոյ զոյդ արկիներ են շարուած: Մինչու ուղղաձիգ շարքի բոլոր արկղները թերթուած են մի կողմ — զեկուած խիկ միւս շարքինը — զէպի ձախի: Այսպիսով սասցւում են մի շարք երկար և միասնակի ձագարներ (ձագարանման անշատակ ջրփողներ, օրուիներ), որոնք զամաւրուած են մէկը միւս վրայ: Եթէ հատիկները լցնենք վերին ջրփողի խողովակի մէջ, նա կանցինայ իր տակ եղած ջրփողի մէջ, այնուզից երրորդի ելն, մինչև վերջնի մէջ որ ունի յատակի այնպէս որ արկղների մէջ եղած ամբողջ միջնավայրը լցւում է հատիկներով որով կատացուի չորացնելիք հատիկների մի ուղղութիզ շերտ: Առաստացի մէջ շինուած են հատիկները: Աիւերսի հատիկները չորացնելու սիստեմը մինչ այժմ եղածների մէջ ամենալաւուն է: Նրա մէջ հատիկները երբէք չեն խաչւում տաքութիւնից խեղդուում տապակուում, և չորացրած հատիկները պահպանում են իրենց կեանքը, ամենու ընդունակութիւնը:

## Ա. Ա. Բ. Ա. Բ.

Սովորաբար ամենուը մի շինութիւն է որ ծառայում է անակտութեան վերաբերիալ ամենայն տեսակ իրեր, մանաւանդ հացահատիկներ և այլու պահելու համար: Հարուստ զիւղացիք ամրացը շինուում են սովորաբար լուփայից, ուղիղ անկիւն սենեակի ձեռվ որի ձախար, այսինքն երկար կողմը՝ ձգուած է լինուած փողոցի երկարութեամբ և ծածկուած է երկու կողմը ցածրացնդ տանիքով: Հակառիկ կողմը շինուած է լինում մի զուռ, մէծ և

անոր վականութ. նոյն ճակատի կողմք երբեմն մնում են գետնից բարձր մի վարդիկ պատրշագամիք Պատշգամիքը ծածկում է նոյն ամրարի առնիքի ծածկոցով:

Ամրարը կանգնեցնում են սովորաբար բնակութիւնից հեռու, երբեմն նոյն խի զիւղից գուրայ նրա շրջակալքում: Փայտեայ ամրաբները վաղուց է որ գործադրում են մեր գիւղական շրջաններում: Ինչն ըստ ինքնան հականալի է, որ շատ հողեր կամ մեծամեծ փորուածքներ ունեցող երկրագործները չեն կարող բաւականանալ այդ պիսի փայտեայ ամրաբներով:

Մեր կողմերում զիւղացիք հացահատիւները մեծ մասամբ պահում են հորերում, որոնց տեղի զիրքի անյարմարութեան պատճառով կամ մուկն է ուտում կամ խոնառութիւնից և այլ և այլ պատճառներից փշանում են: Կան զիւղացիներ, որոնք հորերը ծեփում են կըով ու այդպիսով մեծամեծ վնասների սուածն առնում: Բայց ինչ էլ որ ինից այնուամենայնիւ այդ հորերը անյարմար են և զիւղացիք շատ անգամ մեծամեծ վնասների ենթակոյ են լինում: Առաջ խորդ ենք տալիս այլ կերպ ամրաբներ շնորհ մի յարկանի և բաղմացարկանի:

Ամրաբները սովորաբար լինում են փայտից կամ քարից: Նրանց չափը որոշելու համար պիտի է աշքի առաջ ունենալ այն որ խորաքանչիւթ խորանարդ սաժեն իր մեջ պարունակում է 46 շետքիրտ հացահատիկ: Արդիս զի հացահատիկը լաւ և անվիճակ պահուի, հարկաւոր են հետեւալ կանոնները. Նախ՝ ամբողը հնար եղածին չափ առան պիտի է իր նի, երկրորդ՝ չոր, երրորդ՝ լաւ հոգմահարուող (պրօԵՏՐՎԱՅԻՑ): Առաջին պայմանին բաւականութիւն տալու համար հարկաւոր է ամրաբը շնորհ բայց տեղում և զաներն ու լուսամուաները բայց անել հետիւսոյին կողմը. երրորդ՝ պայմանին բաւականութիւն տալու համար պիտի է ամրաբները գետնից  $1\frac{1}{2}$  կամ 2 արշ. բարձր կանդնեցնել և այնպիս շնորհ, որ համեմիները չըսու են արտաքին պատերին այլ պահուեն առանձին մեծ փայտե արկդներում (սցենի): և վերջապես յաջող հողմահարուելու համար շնորհ են առանձին իր-

զովակներ: Ամրարի ներքին յարկի յատակը կարող է ծեփած, զաջած լինել կամ սպայական, իսկ վերին յարկինը 6—7 վերշականոց գերանների վերայ ամրացրած տախտակեայ յատակի: Յատակի տախտակները շատ եիտ կերպով պիտի է ամրացներ, որպես զի անցքերում հատիկներ չըցուին: Ամրարի առաստաղը պիտի տախտակից լինի և ամուր, որ պահպան կաթելուց և խոնառութիւնից: Ամրարի համար լուսամուաները աւելի վնասակար են, քան օդակար, որովհետեւ ամառը նրանց միջոցով տաքութիւնը մանամ է ամրարի մէջ. երբեմն լուսամուաները հարկաւոր և շնորհ միմայն տեղի յաջաղ օդափոխութիւն (ՎԵՏԻԼԱԳԻԱ) և փակ զոներ ունեցող ամրաբներում: Բարձրացարկանի ամրաբներում լուսամուաները շնորհ են նեղ հերկար, 14 վերշ. լայնութեամբ և ծառ  $2\frac{1}{2}$  արշ. բարձրութեամբ: Մի յարկանի ամրաբներում լուսամուաները բայցում են ուղղակի պատերի մէջ առաստաղի տակ և ունենում են կարճ ու զիդ անկիւն քառանկիւնու ձի: Առաստամուաների անցքերի մէջ շնորհ են երեք շարք շրջանները. Նախ՝ զրոյի կողմից երկաթեայ փանդակ գողերի համար ապա երկրորդ՝ արտաքին անշարժ շրջանակ մասակայ թելից հիւսած ցանցով միջատների զէմ: Ե երրորդ՝ ապակեայ ներքին փեղկաւոր շրջանակ: Գոները շնորհ են հաստ տախտակներից մատ 1 սամ. լայնութեամբ, և պիտի է կամել երկար թաթեր ունեցող օգակներից: որ պատեակով ներսից ամրացրած է: Բայց արտաքին զոնից հարկաւոր և շնորհ նաև ներքին ցանցաձի մի զուս, որով փակում են ամրաբը հաղմահարելիս:

Մի յարկանի ամրաբների մէջ հացահատիկները տեղադրում են ներսում շինուած փայտեայ մեծ արկդների մէջ, որոնց շերտերի հաստութիւնը հասնում է երբեմն մինչեւ 4—5 արշ. ներսի փայտեայ ամրացաւեցնուած արկդները զանազան տեսակ հացահատիկների համար ունին առանձին բաժանմունքներ, բաղմացարկանի ամրաբներում հացահատիկը լցուում է ուղղակի յատակի վրաց  $1\frac{1}{2}$  արշ. հատաւթիւն ունեցող շերտերով և իր-

քոնցիւր տեսակի հացահատիկ դասաւորում են առանձին յարկերում: Հացահատիկներ պահպան պայմանների բազմաթեսակութեան շնորհիւ և յուած է գալիս ամբարներ հողմահարելու կարիքը, որի նպաստին է ահազին քանակութեամբ զիզուած հատիկների շերտերի միջով արտաքուստ չոր օդ անցկացնել: Ամբարները շինուում են առարեր կերպերով՝ ա) մի յարկանի ամբարների մեջ փայտեայ արկղների (զաքրոմ) միջով անց են կացնում եռանկիւնաձև հատուած տախտականին խողովակներ, ծակծկած պատերով, նրանց ծայրերը դուրս են գալիս զեպի այն անցքերը, որոնք շինուած են արտաքին պատերի մեջ: Այդ անցքերը յարկարեցրած են զեպի ցած այնպէս, որ պաշտպանուած լինեն անձրեխց և ունեն փակոցներ: Առաստաղի մեջ նոյնպէս օդակար է շինել դուրս ձգուող (ՎԵՐԱԿԱՅ) առփորական խողովակները՝ բազմայարկանի ամբարների վերին յարկերում նոյնպէս շինուում են հասարակ դուրս քաշուող խողովակներ և, որպէս զի նրանց գործողութեամբ տարածուի բոլոր յարկերում՝ յատակների մեջ բաց են անուում մօտ 2 քառ. վերշ. բացուածք ունեցող ոչ մեծ անցքեր, դասաւորելով նրանց դանակն յարկերում, մելք միւսի հանդեպ: Վերելից նրանք փակուում են մետաղեայ թելից հիւած ցանցով իսկ ներքելից փակուում են առանձին փակոցով: Ամբարի յատակի տակ և կամ ներքին յարկի մեջ չպէտք է պահել ոչ մի հոտակա բան:

Ամենալաւ կերպով կառուցուած փայտեայ ամբարների (զաքրոմ) մեջ հացահատիկը կամ ալիւրը լցւում է վերելից իսկ դուրս է հանուում ներքելից, անցքերի միջով, որոնք շինուած են ամբարի յատակի մօտ և ծածկուում են փակոցներով:—Ամբարների ոյս կերպ կաղմութեան ժամանակ հատիկները երկար չեն կարող մնալ ընկած՝ առանց դորժածութեան, որովհետեւ այս եղանակով մենք միջոց կունենանք դուրս հանել ամենից առաջ լցուածքը. բացի դրանից հատիկները բարձրից ներս լցնելիս այս ու այն կողմին են զլորուում, որով և նրանք հողմահարեւում են: Ամբարների մեջ զետեղած փայտեայ արկղի (զաքրոմ) յատակը ամբարի յատակից 10 վերշ. բարձր պէտք

է կանգնած լինի. արկղների մեջ ով, ոք է մատառ որապէս 3 արշ. լայնութեամբ ունեցող մի անցքը թողնելու իսկ արկղների և արտաքին պատերի մեջ եղած բաց տարածութեամբ հաւատ պէտք է մինի մօտաւորապէս 10 վերշ. Հացահատիկները լիշեալ ձեր մի յարկանի ամբարների մեջ լինելու համար ամենից յարմար է առաստաղի երկու երեսների վրայ զաներ շինել ապա նրանց վրայ ամբարյնել փոքր ինչ զամի վայր ներքելից վերև բարձրացող փայտեայ այնպիսի ճանապարհներ, որ հատիկները սոյլերով բարձրացնելու հնարաւորութեան լինի երրեմն այդ զարիգուս ճանապարհների փոխարէն զաների մեջ աեզաւուածք են նոյնուում է լինուած պատշաճամբի վրայից մինչեւ կերպ բարձրացող բարձրացնելու միջնայ, որի միջոցով բարձրացնելու միջնայները ուղարկելի սոյլերի վրայից վերնայարկը: Երրեմն ճախրակը աեզաւուածք է լինուած պատշաճամբի վրայ, այն ժամանակ պատշգամբի վրայից մինչեւ վերնայարկը (շերճակ) ջուալներով հացահատիկները պէտք է ձեռներով կրել:

Բազմայարկանի ամբարների ճախրակը աեզաւուածք է վերնայարկուում, իսկ ուղիղ նրա վեց ու զետք բոլոր յարկերի մեջ շինուում են քառակարգ պատշաճամբ կողմը 1 արշ. 4 վերշ. երկարութեամբ: Այդ զաները ծածկուում են երկու փեղկերով: Հեց նոյն այդ փեղկերի վրայ բաց է, արած մի կլոր անցք պարանը թողնելու համար, որ անց է կինուած ճախրակից զեպի ներքին յարկը: Զուալով հացահատիկները վերև բարձրացնելու համար բաց են անուում բոլոր բացուածք զաների (այօմ), միջով ապա համարները լինելու համարների ծայրին ամբարյնուում են ջուալը և ճախրակի միջոցով քաշուում են վերև. ազատ կերպով նուանց է կինուած բոլոր բացուածք զաների (այօմ) միջով ապա համարները է մինչեւ փակ զանամբի փեղկերը, բաց է անուում, որովհետեւ աւելի մեծ է այն կլոր անցքից, որի միջով պէտք է անց կինուայ պարանը ու քիչ բարձր կանգնած թողնուում է, որից յետոյ փեղկերը իրենք արագութեամբ փակուում են: Այսպիսով ուրիշն այն յարկի բարձրացող դուրս ուր գլուխուալուս զանուում են աշխատաւորները:

միշտ պետք է վակ սրահել, որպես զի պատառ չարար կամ՝ յանկարծ անդուշութիւնից ընկնելու առաջն առնուի:

Երբ մի որևէ է քաղաքում կարեղութիւն կայ հաւաքելու աշադին քանակութիւնից հացահամափի պաշար, այն ժամանակ ամբարները շատ մեծ են շինում. առանձնապիս մեծ են շինուած լինում պիտակներ ամերները: Երբեմն քաղաքներում քաղաքի հաշուով շինում են այդպիսի մեծ ամբարները որոնք եթէ իրեն, քաղաքին հարկաւոր չեն, տայս են վարձով մեծ քանակութիւնից հացահամափիներ ունեցողին: Ստացուած գումարը քաղաքի աշքի ընկնող եկամուտներից մեկն է կազմում: Այդպիս օրինակ, Պետերբուրգում այդպիսի քաղաքի սեփական ամբարներից առաջը ում է, մոտ 50,000 ր. եկամուտ:

Դ. Պ.

## ՄԱՆՅԱԼՈՒԹՅՈՒՆ

Վեպակաց ուղերի ունցացման միջոց.—Գիւղատըն-սեսական թերթերից մէկում ցոյց է արուած հոդի որդերի (земляные черви), որոնք շատ վնասներ են պատճառում պարտիզանին ծաղկամաններում ու մարդերում զանազան բոյսեր աճեցնելին՝ ոչնչացման շատ հասարակ և աժան նստող միջոց: Սովորական ձիւ շագանակի (հոնորի կատան) պառունքը պէտք է թումանով մանրացնել, վերան լուր լցնել և այդպէս թողնել մի ամրող օր: Մէկ մոր ջրի համար վերցնում են 8 շագանակ (մի վեր ջրի համար մատաւրապէս 100 հատ). Այդպէս պարաստուած խառնուրդով ջրում են ծաղկամանների կամ մարդերի հոդը այնքան, մինչև որ կշանայի: Որդերը կշտապեն գուրս գալ հոդից և իսկոյն կասակեն. շատերը նոյն իսկ դեռ հոդից դուրս չեկած սատկում են: Մի անդամ ջրելը բաւական է, որպէսզի բոլորը ոչնչանան: Ամենաքայլ բոյսերին անգամ այդպիսի խառնուրդը անվնաս է, Որպէսզի այս միջոցը կարողանանք ժամանակին գործադրել: Հարկաւոր է շագանակը գեռաշնանից չոր տեղերում պատրաստ պահել:

\* \* \*

Կարի շրախաւոն լինելը ստուգիու միջոց.—Կաթի հետ ջուր խառնած լինելը կամ ըլինելը որոշելու համար շատ հասարակ և յարմարաւոր մի միջոց կայ: Այս են առնում որոշ քանակութեամբ կաթ

և երկու անգամ աւելի ծանրութեամբ 900 սպիրու: Այս երկուուր լցնում են գեղատներում վաճառուող մի առանձին տեսակ ապակեայ ամանի մէջ (պրօնիկ) և սկսում են 5—8 րոպէ հարել, որից յետոյ խառնուրպը գտարկում են մի ապակեայ ափսէի մէջ և դիտում. եթէ կաթի մէջ ջրի խառնուրը չկայ, այն ժամանակ սպիրու ներգործութիւնից կաթի բաղադրիչ մասերից մէկը՝ բնապանից (բազենի): Կազուէ մակարդուիլ և 40—50 վայրկեան յետոյ կատացուն մանրիկ բշտիկներ (չլունյա): Բայց եթէ կաթի հետ խառն կայ նաև ջուր, այդ ոչնիկների կազմութիւնը ուշ տեղի կունենայ, և որքան ջուր շատ խառն լինի, այնքան աւելի ուշ երեան կգան այդ բշտիկները. այսպէս օրինակ, եթէ կաթի կէս մասը ջուր է, մակարդուած բշտիկները կարող են երեան զալ սպիրու հետ խառնելուց կէս ժամ յետոյ միայն:

\* \*

Մ'ներից ապահովիր միջոց.—Սովորական հաւանդի մէջ մանրում, փաշի են գարնուում որոշ քանակութեամբ չհանգած կիր և ապա անցկացնում շատ խիտ մաղի միջով: Մաղած փոշու հետ խառնում են նոյնքան շաբարի փոշի, լաւ խառնում են իրար հետ և ստացուած խառնուրդը լցնելով թըդթի, ափսէի կամ կասկարայի վերայ, զնում են մէների սիրած տեղերում:

Ընրիհի խառնուրդի մէջ եղած շաբարի փոշու, մէներն սկսում են ագահարար ուտել այդ խառնուրդը, և հէնց որ կիրը համում է նոցա ստամբուր և ստամբուային հիւմի և խմած ջի ազդեցութիւնից կիրը սկսում է հանգչել, այն ժամանակ ստամբուռում և ազիքներում սաստիկ բըրբուռում է առաջ զայիս, որից և թունաւորուած մէները իսկոյն սատկում են:

\* \*

Օրինակիցի սենյակար միիր.—Միլակ հասակ ունեցող և չափաւոր աշխատող մարդը իր մարմնի կազմուածքը կանոնաւոր վիճակի և հաւասարակութեան մէջ պաշելու համար ամենայն օր պէտք է ընդունէ կերակուրի այնպիսի քանակի որ ունենայ հետևեալ բաղադրիչ մասերը. 1) սպիտակուցային նիւթեր 120 գրամ; 2) ճարպային՝ 56 գրամ; 3) օսլային (շաբար, օսլայ, խորշանիւթ, այս բռլորը, իհարկէ, լաւ եփած), 500 գրամ: Այսպիսի նիւթեր պարունակելու համար ճաւշը պէտք է բաղկանայ մնից, հացեց բանջարեղիներից, կաթից և այլն: Բայց արգեօք կերակրի համար գործածուելիք նիւթերի մէջ կայ այնպիսի մէկը, որ պարունակէ իր մէջ վերեւում յիշուած բոլոր նիւթերը. Գիւղութիւնը և փորձը պատասխանում են այս հարցին՝ ոչ, Աչ մի կանոնաւոր կերակրու իր մէջ այդ քանակութեամբ